«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2016 թվականի

2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է ՀՀ ԿԳՆ-ի հաստատած կանոնակարգի պահանջներին համաձայն: Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 932 տեղ, որից 66-ը (ներառյալ ՀՀ ՊՆ պատվերով հատկացված 6 անվճար տեղը)՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 866-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ ընդունվել է 75 (այդ թվում 6-ը՝ ՀՀ ՊՆ պատվերով, 9-ը՝ արտոնությունով) դիմորդ, իսկ վճարովի ուսուցման համակարգում՝ 841 դիմորդ: ԼՂՀ-ին հատկացված նպատակային տեղերը համալրել է 12 դիմորդ, սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով՝ 12 դիմորդ: Այսպիսով՝ առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 940 դիմորդ:

Առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 530 դիմորդ. 175-ը (հատկացվել է 160 տեղ) համալրել են ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ տեղերը, այդ թվում 10-ը՝ ԼՂՀ-ին հատկացված տեղերի հաշվին, 5-ը՝ արտոնությամբ, իսկ 355-ը՝ վճարովի ուսուցման համակարգինը:

Հեռակա ուսուցման բակալավրիատ դիմել է 257 դիմորդ. մրցույթով ընդունվել են 235-ը:

Հեռակա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 330 տեղ (դիմել են 301-ը). մրցույթով ընդունվել են 290-ը, որից 2-ը՝ արտոնությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. 2016-2017 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել բավարար:
2. Հանձնարարել ուսումնական բաժնին՝ ուսումնասիրել մագիստրատուրայից հրաժարվելու պատճառները:
3. Հանձնարարել շարունակական կրթության և կարիերայի բաժնին՝ մինչև 2017 թվականի մարտի 1-ը ուսումնասիրել դիմորդների ՀՊՏՀ դիմելու դրդապատճառները, մշակել դիմորդների մասնագիտական կողմնորոշման կարգ և կառուցակարգ, հարստացնել ապագա դիմորդներին տրվող տեղեկատվությունը և համալսարանի կայքի միջոցով կատարելագործել դրա տրամադրման ձևերն ու կառուցակարգերը:
4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Մ.Ն.Հարությունյանին և Ս.Ս.Խաչատրյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

01.12.2016 թ.